Հավելված N 58
Հաստատված է
Էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ. հուլիսի 26-ի N 636-Ա հրամանով

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱԳՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) սննդամթերքի անվտանգության վարչության (այսուհետ՝ Վարչություն) անասնաբուժության բաժնի (այսուհետ՝ Բաժին) պետ (ծածկագիրը՝ 23-32.2-Ղ4-1)

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի պետն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ

Բաժնի պետին անմիջակա ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր անասնաբույժներից մեկը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Մհեր Մկրտչյան 5

2. Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. Կազմակերպում է անասնաբուժության ոլորտի պետական քաղաքականության մշակումը,
2. Կազմակերպում է անասնաբուժության ոլորտում ռիսկերի կառավարումը և ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակումը՝ գիտականորեն հիմնավորված ռիսկերի վերլուծության և գնահատականների հիման վրա,
3. Կազմակերպում է հանրապետությունում անասնահամաճարակային իրավիճակի վերաբերյալ հավաքագրումը, մշակումը և ներկայացումը,
4. Կազմակերպում է անասնաբուժության ոլորտի վերաբերյալ ստացված տվալների ամփոփման, վերլուծության աշխատանքները,
5. Բարձրացնում է առաջնային խնդիրները և առաջարկություններ ներկայացնում դրանց լուծման համար,
6. Կազմակերպում է հանրապետությունում անասնահամաճարակային իրավիճակի վերաբերյալ տեղեկատվություն և մշակում անասնաբուժական տարբերակված միջոցառումների իրականացման կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի մշակումը և կազմումը,
7. Կազմակերպում է դիտարկումների արդյունքում բացահայտված անասնաբուժության ոլորտում տիրող իրավիճակի, հիվանդությունների օջախների վերաբերյալ տեղեկատվություն և կազմակերպում է օջախների վերացման համալիր միջոցառումների պլան,
8. Կազմակերպում է պետական աջակցությամբ իրականացվող անասնահակահամաճարակային միջոցառումներին և համալիր միջոցառումների իրագործման անհրաժեշտ գույքի, պարագաների և պատվաստանյութերի չափաքանակների ճշգրտումը և բաշխումը,
9. Կազմակերպում է Հայաստանի Հանրապետության կառավարության, այլ նախարարությունների և մարմինների կողմից ներկայացված օրենքների, կառավարության

որոշումների և այլ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ մասնագիտական կարծիքների տրամադրումը,

10. Կազմակերպում է Բաժնի իրավասության սահմաններում կազմակերպություններից և քաղաքացիներից ստացված դիմումների, բողոքների, հարցումների, պարզաբանում կամ տեղեկատվություն ստանալու հետ կապված պատասխան գրությունների կազմման աշխատանքների համակարգումը,

11. Կազմակերպում է մասնակցություն օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ կազմակերպվող անասնաբուժության ոլորտին վերաբերող հանդիպումներին, խորհդակցություններին, սեմինարներին, խորհրդաժողովներին և այլ միջոցառումներին,

12. Կազմակերպում է ԵԱՏՄ և այլ միջազգային կառույցների կողմից ներկայացված գրությունների ուսումնասիրություններ և դրանց հետ կապված գրությունների կազմման աշխատանքների համակարգումը:

13. Իրականացնում է նախարարի հրամաններով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթներից բխող այլ լիազորություններ,

14. Նախարարի, ոլորտը համակարգող նախարարի տեղակալի, գլխավոր քարտուղարի, վարչության պետի հանձնարարականներով իրականացնում է իրեն վերապահված այլ գործառույթներ:

Իրավունքները՝

• Ստանալ անասնաբուժության ոլորտում պետական քաղաքականության մշակման, անասնաբուժության ոլորտի վերաբերյալ ստացված տվյալների ամփոփման, վերլուծության աշխատանքների վերաբերյալ առաջարկություններ,

• Համագործակցել անասնաբուժության ոլորտում ԵԱՏՄ և միջազգային կազմակերպությունների հետ,

• Ուսումնասիրել և վերլուծել հանրապետությունում անասնահամաճարակային իրավիճակի վերաբերյալ տվյալները,

• Ուսումնասիրել դիտարկումների արդյունքում բացահայտված անասնաբուժության ոլորտում տիրող իրավիճակի վերլուծության արդյունքները և մասնակցել հիվանդությունների օջախների վերացման համալիր միջոցառումների պլանի մշակմանը,

• Ուսումնասիրել անասնաբուժության ոլորտում ռիսկերի կառավարման և ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակումը՝ գիտականորեն հիմնավորված ռիսկերի վերլուծության և գնահատականների հիման վրա,

• Ստանալ պաշտոնատար անձնանցից և այլ մարմիններից բաժնի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր:

Պարտականությունները՝

• Ներկայացնել հանրապետությունում անասնահամաճարակային իրավիճակի վերաբերյալ տեղեկատվություն և անասնաբուժական տարբերակված միջոցառումների իրականացման կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի վերաբերյալ առաջարկություններ,

• պարբերաբար ներկայացնել դիտարկումների արդյունքում բացահայտված անասնաբուժության ոլորտում տիրող իրավիճակի, հիվանդությունների օջախների վերաբերյալ տեղեկատվություն և օջախների վերացման համալիր միջոցառումների առաջարկություններ,

• անասնաբուժության ոլորտում ռիսկերի կառավարման և ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման՝ գիտականորեն հիմնավորված ռիսկերի վերլուծության և գնահատականների հիման վրա առաջարկությունների ներկայացնում,

• Հետևել պետական աջակցությամբ իրականացվող անասնահակահամաճարակային միջոցառումներին և համալիր միջոցառումների իրագործմանն անհրաժեշտ գույքի,

պարագաների և պատվաստանյութերի չափաքանակների ճշգրտմանը և բաշխմանը,
• Բաժնի լիազորությունների շրջանակներում նախապատրաստել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ,
• Ներկայացնել համապատասխան զեկուցումներ՝ իր կողմից սպասարկվող ոլորտին առնչվող համապատասխան մարմիններում, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից կատարվող աշխատանքների վիճակի մասին,
• մասնակցել անասնաբուժության ոլորտին առնչվող հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) մշակման ու քննարկման գործնթացներին:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը՝

1	**Ուղղություն**	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնային տնտեսություն և անասնաբուժություն
2	**Ոլորտ**	Անասնաբուժություն
3	**Ենթաոլորտ**	Անասնաբուժություն
4	**Մասնագիտություն**	Անասնաբուժություն

3.2. Մասնագիտական գիտելիքները՝

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը՝

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ կենսաբանական գիտությունների կամ առողջապահության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Կոնֆլիկտների կառավարում
4. Ժամանակի կառավարում
5. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում

4. Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և քաղաքականության իրականացման ապահովման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ կամ մասնակցում է այդ խնդիրների լուծմանը: